ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2014Թ. ԵՎ 2015Թ. Ի-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարզն ընդգրկում է Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Սևանի և Ճամբարակի տարածաշրջանները՝ 92 համայնքներով 5-ը քաղաքային և 87 գյուղական): Բնակչությունը 01.01.2015թ.-ի դրությամբ կազմում է 233.0 հազար մարդ, որից 70.2 հազ. քաղաքաբնակ 30.1%), 162.8 հազ.՝ գյուղաբնակ 69.9%):

Մարզում 2014թ. ընթացքում թողարկվել է 22,573.1 մլն դրամի (ընթացիկ գներով) *արդյունաբերական արտադրանք*, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 1.8%-ը: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 1.4-1.9%-ը (տես՝ ***հավելված 1)***: 2014թ. ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը նվազել է կազմելով՝ 96.3%: Մասնավորապես հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արդյունաբերական արտադրանքի աճի տեմպը կազմել է 85.3%, էլեկրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 84.9%, իսկ աճ է գրանցվել մշակող արդյունաբերությունումը՝ 113.4% և ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում՝ 103.3% (տես՝ **հավելված 1.1**):

2015թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում թողարկվել է 13,723.9 մլն դրամի (ընթացիկ գներով) *արդյունաբերական արտադրանք*, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 2.2%-ը (տես՝ ***հավելված 2)***: 2015թ.-ի I կիսամյակում արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 133.5%: Մասնավորապես հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արդյունաբերական աճի տեմպը կազմել է 187.6%, էլեկրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 105,4%, մշակող արդյունաբերությանը՝ 105.0% ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակմանը՝ 89.2% (տես՝ **հավելված 2.1**):

Բոլոր աղբյուրներով մարզում 2014թ. ընթացքում իրականացվել է 11,780.2 մլն դրամի շինարարություն: 2014թ. իրականացված շինարարությունը կազմել է հանրապետական ցուցանիշի 2.7%-ը, իսկ մարզի շինարարության ծավալները համադրելի գներով 2013թ.-ի նկատմամբ կազմել են 98.9% (տես՝ **հավելված 3**): 2015թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում մարզում իրականացվել է 3,329.1 մլն. դրամի (ընթացիկ գներով) կապիտալ ներդրումներ, որը կազմում է հանրապետությունում հունվար-հունիս ամիսների ընթացքում իրականացված կապիտալ ներդրումների 2.5%-ը, իսկ համադրելի գներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 105.1%-ը (տես՝ ***հավելված 4*)**:

Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 2014թ.-ին կազմել է 188.7 մլրդ դրամ, որը հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի համախառն ծավալի 19.0% -ն է (2013թ.-ի համապատասխան ցուցանիշից ավելի է 23.4 մլրդ դրամով), ընդ որում աճը հիմնականում պայմանավորվել է բուսաբուծության զարգացման հաշվին (2013-14թթ. տեղեկատվությունը և համեմատականը մարզերի հետ՝ **հավելված 5-ում**):

1.1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2014թ. ընթացքում մարզում ՀՀ պետական բյուջեի, ՀՏՋՀ և մի քանի այլ աղբյուրների միջոցների հաշվին ճանապարհաշինության, առողջապահության, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում իրականացվել են շուրջ 4,9 մլրդ. դրամի ներդրումներ: 2014թ-ին վերոնշյալ բնագավառներում իրականացված ներդրումները մեկ շնչի հաշվով կազմել է 21.4 հազ. դրամ (տես՝ ***հավելված 6***):

Մարզում «ԳՏՏՋ ԾԻԳ» ՊՀ-ի կողմից (ԻՖԱԴ) 2012-2014թ. ընթացքում 1 համայնքում իրականացվել է շուրջ 36.2 մլն դրամի, իսկ 2015թ. 3 համայնքներում իրականացվել է շուրջ 189.7 մլն դրամի աշխատանքներ (տես՝ **հավելված 7):**

❖ Արդյունքում լուծվել է Արտանիշ համայնքում ցածր ճնշման և շուրջ 6 կմ միջին ճնշման գազատարի կառուցման խնդիրը: Համայնքն ամբողջությամբ գազիֆիկացված է: Համայնքում բնակվում է 607 մարդ:

❖ Վերանորոգվել է Ձորագյուղ համայնքի շուրջ 1600 գ/մ ոռոգման համակարգը, որը կապահովի շուրջ 180 հա հողամասի ոռոգումը:

2014թ. ՀՏՋՀ-ի միջոցներով իրականացնել է.

❖ Արծվանիստ համայնքի ՕԿՋ-ի և արտաքին ջրատարի կառուցում՝ 52.9 մլն դրամ: Կառուցվել է նոր ՕԿՋ և շուրջ 700 գ/մ ներքին ջրագիծ, որից օգտվում են 65 տնտեսություններ:

❖ Գեղամավան համայնքի մանկապարտեզի երկու մասնաշենքերի և տաք անցումների հիմնանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում՝ 98.5 մլն դրամ: Ծրագիրը ավատվել է, սակայն մանկապարտեզը չի գործում: Մանկապարտեզի երրորդ մասնաշենքի հիմնանորոգումից հետո այն կսկսի գործել: Մանկապարտեզ կարող են հաճախել շուրջ 90 սան: Երրորդ մասնաշենքի հիմնանորոգման համար անհրաժեշտ է շուրջ 45 մլն դրամ: Ներկայումս քննարկվում է ծրագիրը ՀՏՋՀ-ի միջոցներով վերանորոգելու հնարավորությունը:

2015թ.-ին ՀՏՋՀ-ն գտնվել է վերակազմավորման գործընթացում, ուստի վերջինիս կողմից կապիտալ ծրագրեր չեն իրականացվել:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 02.07.2015թ. N 766-Ն որոշմամբ (6-րդ հրատապ ծրագիր) մարզին հատկացվել է ***445.0 մլն դրամ*** գումար՝ հրատապ խնդիրների լուծման համար, *(որից՝ 51,4 մլն դրամով ավարտին կհասցվեն Մաքենիս և Փ.Մասրիկ համայնքների խմելու ջրատարերի արտաքին ցանցերի կառուցման, 21,9 մլն դրամով՝ Լճաշեն համայնքի խորքային հորի հորատման, 58,4 մլն դրամով՝ Արեգունի և Դրախտիկ համայնների համայնքային կենտրոնների կառուցման աշխատանքները: 35,5 մլն դրամով կշարունակվեն Ներքին Գետաշեն համայնքի ոռոգման համակարգի կառուցման, 24,4 մլն դրամով՝ Ծովագյուղ համայնքի մշակույթի տան վերանորոգման, 103,3 մլն դրամով՝ Սևան քաղաքի Նաիրյան փողոցի ասֆալտապատման և 29,2 մլն դրամով՝ Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցման աշխատանքները: 59,4 մլն դրամով կսկսվեն Մարտունի քաղաքի Մամիկոնյան փողոցի ասֆալտապատման, Լճափ համայնքի միջնակարգ դպրոցի և 7,1 մլն դրամով՝ Գեղամավան համանքի մշակույթի տան միջոցառումների սրահի ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքները: 500,0 հազ դրամ հատկացվել է նախագծահետազոտական աշխատանքների համար: «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից 3 համայնքներում իրականացված և իրականացվող շինարարական աշխատանքների համաֆինանսավորման նպատակով հատկացվել է 25,0 մլն դրամ):*

ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 համայնքներ գտնվում են սողանքային գոտում: Վերջին տարիներին սողանքը մեծ վնաս է հասցրել մարզի բնակֆոնդին և ինժեներատեխնիկական կառուցվածքներին: 1997թ.-ին «Հայսեյսմշին» ՓԲԸ-ի և 2005թ.-ին «Կառուցապատում և սպասարկում ԳԱԿ» ՓԲԸ-ի կողմից կատարվել են ուսումնասիրություններ թվով 5 համայնքներում: Գարնանային տեղումներից հետո մարզում ակտիվանում են սողանքային երևույթները: Սողանքային երևույթները առկա են մարզի Դպրաբակ, Այգուտ Մարտունի, Կալավան և Ձորավանք համայնքներում: <u>Սողանքային խնդիրների ընդհանուր լուծման համար անհրաժեշտ է շուրջ 220 մլն դրամ</u>:

ՀՀ Գեղարքունիքի մարզում առկա են 460 բազմաբնակարան շենքեր՝ 13675 բնակարաններով, 750.7 հազ. ք.մ ընդհանուր մակերեսով: ՀՀ պետական ռեգիստրի տվյալներով մարզում գրանցված են 6 համատիրություններ, որոնք կառավարում են 218 շենք:

01.09.2015թ.-ի դրությամբ մարզում գազաֆիկացված են 45456 բնակարաններ (կազմում է ընդհանուրի 71.6%-ը), այդ թվում՝ 13675 բնակարաններից 9981-ը գազաֆիկացված է (72.9%): 49798 առանձնատներից գազաֆիկացված է 35475-ը (71.2%):

1.2. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզն ընդգրկում է 283.1 կմ միջպետական նշանակության, 113.4 կմ հանրապետական նշանակության և 419.9 կմ մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային և 1048 կմ համայնքային նշանակության (կամ բնակավայրերի փողոցներ) ճանապարհներ:

2014թ. մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների, ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման և շահագործման աշխատանքների համար ծախսվել է 587.1 մլն դրամ՝ սպասարկվել է 379.1 կմ ճանապարհահատվածներ (որից՝ 434.2 մլն դրամ ամառային և 152.9 մլն դրամ ձմեռային պահպանման համար):

2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 1370.48 մլն դրամ ընդհանուր գումարով հիմնանորոգվել են.

- Մ4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ73+200-կմ83+120 (Ծովագյուղի խաչմերուկ-Սևան-Դիլիջան թունել) 7.48 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ 1179.58 մլն. դրամ:
- Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+00-կմ1+100 (Սևան քաղաքի մուտք) 1.1 կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ 175.87 մլն. դրամ:
- Մ4-Սեմյոնովկա-Մ4 միջպետական նշանակության ավտոճանապարհը կահավորվել է 180 հատ ճանապարհային նշաններով և 2090 գծամետր երկաթյա արգելափակոցներով՝ 15.03 մլն. դրամ:

Ճանապարհաշինության բնագավառում 2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ 5-րդ հրատապ ծրագրի շրջանակներում, մարզի 9 համայնքներում իրականացվել են 392.67 մլն. դրամի ճանապարհաշինական աշխատանքներ, ասֆալտապատվել է շուրջ 4.47 կմ ճանապարհ **(հավելված 8)**:

Համաշխարհային բանկի պատվիրատվությամբ 2014թ-ին ավարտվել է 2013թ. մեկնարկած Մ10-Ներքին Գետաշեն-Մադինա ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները՝ 487.7 մլն դրամ (10,2 կմ):

Հայաստան Համահայկական Հիմնադրամի միջոցներով 2014թ. հիմնանորոգվել է Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Գեղարքունիքի մարզով անցնող 12.91կմ հատվածը՝ 1579.6 մլն դրամ գումար:

2014թ. Գավառի քաղաքապետարանի պատվիրատվությամբ համայնքային բյուջեի հաշվին իրականացվել են Գավառ քաղաքի Գրիգոր Նարեկացի և Զորավար Անդրանիկ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ՝ 25.98 մլն դրամ գումար: Համայնքային բյուջեների հաշվին իրականացվել են նաև Ներքին Գետաշեն համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 108.97 մլն. դրամ, Ծովինար համայնքի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգում՝ 31.54 մլն. դրամ, Զոլաքար համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 42.0 մլն. դրամ և Նորատուս համայնքի ճանապարհի հիմնանորոգում՝ 47.54 մլն. դրամ գումար:

Ընդհանուր առմամբ՝ 2014թ. ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինարարության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է 4763.16 մլն դրամ (32.66 կմ):

2015թ.-ի ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության 385.9կմ երկարության ավտոճանապարհների համար ընթացիկ ամառային, ձմեռային պահպանման և սպասարկման համար հատկացվել է 659.1 մլն դրամ:

2015թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 387.2 մլն. դրամ ընդհանուր գումարով հիմնանորոգվել է 4.3կմ երկարությամբ՝ Հ39 Մ10-Գավառ-Մ10 հանրապետական նշանակության ճանապարհահատված:

ՀՀ կառավարության 02.07.2015թ. թիվ 766-Ն որոշմամբ մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների շրջանակում նախատեսվում է հիմնանորոգել Սևան քաղաքի Նաիրյան փողոցը 102.3 մլն. դրամ (0,8 կմ) և Մարտունի քաղաքի Մամիկոնյան փողոցը 59.3 մլն. դրամ արժեքով (0.4 կմ):

Համաշխարհային բանկի միջոցներով ընթացիկ տարում հիմնանորոգվում են Հ84 Մ4-Սևան-Մ4 ճանապարհը՝ 114.1 մլն դրամով (1.1 կմ) և Սևան-Վարսեր ավտոճանապարհը՝ 361.0 մլն. դրամով (2.7 կմ):

Հայաստան Համահայկական Հիմնադրամի միջոցներով շարունակվել և 2015թ. օգոստոսին ավարտին է հասցվել Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Գեղարքունիքի մարզով անցնող 0.74 կմ ճանապարհահատվածը՝ 118.4 մլն. դրամ գումարով:

Ընդհանուր առմամբ՝ 2015թ. ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է 1900.0 մլն դրամ:

2015 թվականին մարզում ճանապարհաշինության ոլորտում իրականացվող աշխատանքների ուղղությամբ ներդրումների աճը 2014 թվականի համեմատությամբ կազմում է 39.8%:

Մարզում գործում են 26 ներմարզային երթուղիներ, որոնք սպասարկվում են 5 ուղևորափոխադրող կազմակերպությունների կողմից: Սպասարկման գործում ընդգրկված են 47 տրանսպորտային միջոցներ (ավտոբուսներ՝ 38, միկրոավտոբուսներ՝ 9):

Վերլուծությունները ցույց են տալիս, որ ուղևորահոսքի սակավության, ոչ օրինական տրանսպորտի գործունեության և մրցակցության բացակայության պատճառներով ներմարզային հասարակական տրանսպորտի աշխատանքը դարձել է ոչ բավարար, որոշ երթուղիներ սպասարկվում են ոչ կանոնավոր, իսկ 15 երթուղիների սպասարկումից կազմակերպությունները հրաժարվել են (ոչ շահավետ լինելու պատճառով): ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, համայնքապետերի հետ համագործակցված քայլեր են ձեռնարկվում հասարակական տրանսպորտի աշխատանքը բարելավելու ուղղությամբ: Բավարար վիճակում է գտնվում միջմարզային հասարակական կանոնավոր երթուղիների աշխատանքը: Կանոնավոր սպասարկվում են Գավառ - Երևան, Մարտունի - Երևան, Վարդենիս - Երևան, Սևան – Երևան և Ճամբարակ – Երևան ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիները:

Ներքաղաքային երթուղիների սպասարկում իրականացվում են Գավառ և Սևան քաղաքներում:

Մարզի համեմատաբար խիտ բնակեցված համայնքներում բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստաալիք, իսկ որոշ բնակավայրերում ելնելով իրենց աշխարհագրական դիրքից դիտում են՝ 1-7 հեռուստաալիքներ:

1.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում ընդհանուր ցանքը 2014թ.-ի կազմել է 76,315 հա՝ նախորդ տարվա 74,570 հա դիմաց (հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները աճել են 2349 հա-ով, բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները 69 հա-ով, իսկ կարտոֆիլի ցանքատարածությունները 677 հա-ով, մանրամասն տեղեկատվությունը՝ ***հավելված 9***-ում): 2014թ.-ի մարզում բերքատու պտղի և հատապտղի տարածությունը կազմել է 1,396 հա, որը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ:

2014թ.-ի ցանքատարածությունների աճին զուգընթաց արձանագրվել է հացահատիկի և հատիկաընդեղենի, բանջարեղենի, կարտոֆիլի, պտղի և հատապտղի բերքի աճ (2014թ.-ի մարզում ստացված համախառն բերքն ու համեմատականը հանրապետական ցուցանիշների հետ բերված են ***հավելված 10-ում)***:

<u>Գյուղատնտեսության աջակցման և ռեսուրսների զարգացման ծրագրեր</u>. 2015թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 790 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 194.4 տ. գարնանացան գարու, 1.22 տ. առվույտի և 40 տ. կորնգանի սերմացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար 972 հա գարու, 48.8 հա առվույտի և 267 հա կորնգանի ցանք (պահանջարկը բավարարված է):

«2010-2014թթ.-ի ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման» ծրագրի շրջանակներում մարզի 2014թ. մարզի Վարդենիս (30 հա) և Լճաշեն (22 հա) համայնքներում հիմնվել են սերմնաբուծական տնտեսություններ: 2 շահառուի պայմանագրային հիմունքներով տրամադրվել է 4.6 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու՝ 2015 թվականի բերքհավաքից հետո 9.2 տոննա առաջին վերարտադրության սերմացու «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին հետ վերադարձնելու պայմանով, որը պայմանագրային հիմունքներով կհատկացվի մարզի գյուղացիական տնտեսություններին: Այն կնպաստի սորտաթարմացմանը, հետևաբար նաև միջին բերքատվության և համախառն արտադրանքի ավելացմանը: Ծրագրի պահանջներին բավարարող և մասնակցելու ցանկություն ունեցող այլ շահառուներ չեն եղել:

ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի թիվ 911-Ն որոշմամբ 2014թ.-ի աշնանացանի համար մարզին տրամադրվել է 114 տոննա ցորենի սերմացու՝ 2015թ. աշնանը 18.24 մլն դրամ հավաքագրելու պայմանով: Սերմացուն հատկացվել է 14 համայնքների 127 շահառուների և կատարվել է 380 հա ցանք: 2013թ. հատկացվել է 400 տոննա սերմացու՝ 26 համայնքների 445 շահառուների և կատարվել է 1333 հա ցանք: 2015թ. աշնանը կհատկացվի 348 տոննա սերմացու՝ 33 համայնքների 390 շահառուների և կկա-

տարվի 1160 հա ցանք: 2015թ. աշնանացանի համար մարզին նախատեսված 348 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմնացուից 11.09.2015թ. դրությամբ համայնքներին է հատկացվել Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 288 տոննա սերմացու: 288 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի պահանջարկը ներկայացվել է ըստ մարզպետարանի պահանջարկի: Այն բավարար է մարզի կարիքների համար:

Պետական աջակցության ծրագրով 2015թ. մարզին հատկացվել և 11.09.2015թ. դրությամբ ներկրվել է.

- ազոտական պարարտանյութ - 5743 տոննա (ներկրվել է 5472 տոննա - հավաքագրվել է 656.6 մլն դրամ)
- կալիումական պարարտանյութ - 114.7 տոննա (ներկրվել է 67.8 տոննա – հավաքագրվել է 9.49 մլն դրամ)
- ֆոսֆորական պարարտանյութ - 107.6 տոննա (ներկրվել է 20.2 տոննա, հավաքագրվել է 2.82 մլն դրամ)
- դիզելային վառելանյութ – 3467.0 լիտր դիզ. վառելանյութ (ներկրվել է 479408 լիտր, պարտք չկա):

Գումարների հավաքագրումը և ներկրումը ընթացքի մեջ է: Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկը ամբողջությամբ բավարարվում է:

16.09.2015թ. դրությամբ վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 30.5 տոննա բանջարեղեն, 17.9 տոննա պտուղ՝ նախորդ տարի նույն ժամանակահատվածում մթերվել է 49.6 տոննա բանջարեղեն և 13.4 տոննա պտուղ *(տես՝* ***հավելված 11****)*:

2015 թվականին ՀՀ կառավարության կողմից մարզի 75 համայնքների շուրջ 700 սոցիալապես անապահով ընտանիքներին տրվեց օժանդակություն՝ անվճար սերմացուի տեսքով: Շուրջ 225 տոննա գարնանացան գարու, 30 տոննա առվույտի և 34 տոննա կորնգանի սերմացուներ են բաժանվել է սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին:

Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 17,5 %-ը (120,9 հազար գլուխ տավար, որից 58,6 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 14,9%-ը (111,4 հազար գլուխ) և խոզերի՝ 8,9 %-ը (12,7 հազար գլուխ): 01.01.2015թ. դրությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 4.6 %-ով, իսկ ոչխարների ու այծերի գլխաքանակը՝ 8.6%-ով *(տես՝* ***հավելված 12****)*:

Մարզում 2015թ.-ի հուլիս ամսին իրացվել է շուրջ 0.6 հազար տոննա (կենդանի զանգվածով) միս (նվազումը՝ 15.5%), արտադրվել է 13,0 հազար տոննա կաթ (աճը՝ 2.4%) և 6,8 մլն հատ ձու (աճը՝ 0.7%) (տես՝ **հավելված 13)**:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել է 22 համայնք (Մարտունի, Ճամբարակ, Վահան, Լճաշեն, Սեմյոնովկա, Շատվան, Այրք, Հայրավանք, Սարուխան, Կարմիրգյուղ, Ծովազարդ, Ծաղկաշեն, Վարդենիկ, Երանոս, Արծվանիստ, Վազաշեն, Ծովասար, Լիճք, Աստղաձոր, Ծակքար, Մարտունի, Ն. Գետաշեն): Նշված համայնքներում իրականացվում է այդ ծրագիրը, որի արդյունքում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 55 միավոր անիվավոր տրակտոր (շուրջ 368.5 մլն դրամ) և 200 (շուրջ 190.0 մլն դրամ) գյուղտեխնիկա: 2015թ. ծրագիրն արդեն հաստատված է, համայնքներում ձևավորվում են «արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ: Նախատեսվում է ծրագրի երկրորդ փուլում ձեռք բերել շուրջ 300 գյուղատնտեսական տեխնիկա և գյուղ. գործիքներ: Մարզում ջրարբիացվել են 30000 հեկտար արոտավայրեր: Ջրարբիացման համակարգերի կառուցման արդյունքում լիարժեք օգտագործելի են դարձել ոչ միայն նախկինում մասնակիորեն օգտագործվող շուրջ 17000 հա արոտներ, այլև կենդանիների խմելու ջրի բացակայության պատճառով ընդհանրապես չօգտագործվող շուրջ 13000 հա արոտավայրեր՝ յուրաքանչյուր հա-ից միջին հաշվարկով ստանալով 1.7 տոննա խոտի չոր զանգված՝ համաձայն ընդհանուր կերարտադրության դրույթների և անասնաբուծական նորմատիվների: *Արդյունքում՝ նշված տարածքից ապահովվում է շուրջ 6000 տոննա կերամիավոր, որից ստացվում է մոտ 7500 տոննա կաթ՝ շուրջ 825.0 մլն դրամ կամ 990 տոննա քաշաճ (միս)՝ շուրջ 990.0 մլն դրամի:* ***Կոոպերատիվներին գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում՝ խոտհարքներից մսուրային շրջանի համար հավաքվել է տարեկան հավելյալ շուրջ 9000***

<u>տոննա չոր խոտ, որը հավասարազոր է 3690 տոննա կերամիավորի, որից ստացվում է մոտ 4620 տոննա կաթ՝ շուրջ 693.0 մլն դրամ կամ 615 տոննա քաշաճ (միս)՝ շուրջ 615.0 մլն դրամի:</u> *Ծրագրի շրջանակներում իրականացված ջրարբիացման աշխատանքների և գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում ստացվում է միջինում տարեկան շուրջ 1520.0 մլն դրամ եկամուտ:*

Չնայած մարզում հաշվառված է 2755 տրակտոր, 301 հացահատիկահավաք կոմբայն, 840 տրակտորային կցասայլ, 315 տրակտորային խոտհնձիչ, 105 կերահավաք կոմբայն, 270 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, սակայն դրանց սարքինության մակարդակը՝ միջինը շուրջ 60.4 %՝ հանրապետական միջինի՝ 79.3 %-ի համեմատ *(տես՝* ***հավելված 14****):*

«ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման ու հավաքակազմի աստիճանաբար նորացման աշխատանքների իրականացում» ՀՀ կառավարության 2013թ.-ի գերակա խնդրի լուծման շրջանակներում 13.06.2013թ. թիվ 588-Ն և 20.06.2013թ. թիվ 650-Ն որոշումների հիման վրա Բելառուսի Հանրապետությունից ներկրված «Բելառուս 82.1» մակնիշի տրակտորներից, որոնց իրացումն իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը և ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ-ն՝ լիզինգային եղանակով 2014թ.-ին ձեռք է բերվել 76 տրակտոր, 229 գյուղգործիք և 12 հացահատիկահավաք կոմբայն: Մարզի համայնքների գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը հետևողականորեն շարունակվում է:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացման և մրցունակության» ծրագրի օգնությամբ 2014թ. ավարտվել են թվով 20 (Չկալովկա, Գեղամավան, Դդմաշեն, Ծովագյուղ, Վարդաձոր, Մադինա, Ձորագյուղ, Վերին Գետաշեն, Զոլաքար, Ծովինար, Գեղհովիտ, Լիճք, Աստղաձոր, Շորժա, Արտանիշ, Թթուջուր, Մեծ Մասրիկ, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր) համայնքների արոտավայրերում 9.9 հազար մետր ջրագծի անցկացման աշխատանքները: Ձեռք են բերել 51 միավոր անիվավոր տրակտոր, 31 միավոր հակավորող մեխանիզմ, 28 խոտհնձիչ, 9 շարքացան, թվով 137 այլ գյուղգործիքներ, ինչպես նաև 4 միավոր հացահատիկահավաք կոմբայն: Ծրագիրը ավարտվել է 2014թ.:

2013-2014թթ. ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի միջոցով մարզին տրամադրվել է՝ 25 տրակտոր, 24 գյուղգործիք և 5 հացահատիկահավաք կոմբայն:

<u>Մարզում դեռևս օրախնդիր է մնում հակակարկտային կայանների բացակայությունը:</u>

Ամեն տարի մարզում ցանքերի տակ է դրվում 41-42 հազար հեկտար հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններ, որոնք գտնվում են ռիսկային գոտիներում, ամբողջ վեգետացիայի ընթացքում դիտվում են անընդհատ կարկտահարություններ, որի պատճառով գյուղացիական տնտեսություններին պատճառվում է զգալի վնաս: Ընդհանուր առմամբ առաջնային անհրաժեշտ է ռադիոլոկացիոն կայանի և առնվազն 10 հակակարկտային կայանքի ձեռք բերումը (կայանքների համար անհրաժեշտ է շուրջ 40.0 մլն դրամ):

<u>Հողօգտագործում.</u> 2014թ.-ին հողօգտագործման բնագավառում մարզպետարանն ուշադրություն է դարձրել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրման գործընթացին, հողերի պահպանության աշխատանքների իրականացմանը: 01.01.2015թ. դրությամբ մարզում վարձակալության տրամադրման համար նախատեսված համայնքային և պետական սեփականության 61,857.7 հա գյուղ. նշանակության հողերից փաստացի վարձակալության է տրամադրվել 57,825.3 հա կամ **<u>93.5%, այն դեպքում, երբ ընդհանուր հանրապետական/մարզային միջինը կազմում է շուրջ 36%:</u>** Գեղարքունիքում փաստացի վարձակալության հանձնված հողամասերի դիմաց գանձվել է 149.4 մլն դրամ, կատարողականը կազմել է 91.7% (վարձակալությամբ տրամադրված հողամասերի վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը՝ ***հավելված 15-ում):***

2014թ.-ի ընթացքում մարզում օտարվել է 41 հա հողատարածք, որի արդյունքում ձևավորվել է շուրջ 51.7 մլն դրամ հասույթ (ՀՀ մարզում իրականացված հողերի աճուրդ-վաճառքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ***հավելված 16-ում***: Ներկայում հողերի աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և http://www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ-ն հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

1.4. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ստորև ներկայացված են 2013թ. և 2014թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված և 2015թ.-ին նախատեսված գումարները:

(հազ. դր.)

	2013թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2014թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2015թ. նախատեսված (հազ. դրամ)
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան աշխատակազմի պահպանում	*393916.8*	*519584.0*	*670680.6*
Հանրակրթական ուսուցում	*5846471.9*	*6019764.0*	*6337431.8*
Ներառական կրթություն	*46630.6*	*60455.6*	*65025.7*
Հատուկ կրթություն	*89758.2*	*89240.9*	*97699.8*
Արտադպրոցական դաստիարակություն	*7464.1*	*11676.4*	*14634.4*
Նախադպրոցական /կրթություն /	*40020.2*	*57447.2*	*94952.7*
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	*0*	*9169.1*	*9165.1*
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	*25718.7*	*33019.4*	*45345.1*
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	*1208.4*	*1208.4*	*1208.4*
Կրթական հիմնարկների շինարարություն	*93624.6*	*69987.0*	*154756.5*
Կրթական օբյեկտների շինարարություն	*0*	*49975.7*	*0*
Թանգարանային ծառայություններ	*14694.5*	*16478.5*	*17601.4*
Թատերական ներկայացումներ	*38178.5*	*44196.5*	*50210.5*
Մշակութային միջոցառումների իրականացում	*1555.0*	*1247.0*	*3278.2*
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	*1449081.0*	*277972.2*	*495800.0*
Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ ծմեռային պահպանում և շահագործում	*88676.3*	*89639.9*	*98600.0*
Պետական նշանակության ա/ճ-ների հիմնանորոգում	*0*	*409777.8*	*0*
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	*510103.1*	*478466.8*	*290160.0*
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	*0*	*0*	*1080*
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	*0*	*0*	*240032.6*

Սուբվենցիաներ	*0*	*151063.0*	*0*
Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	*0*	*0*	*145985.4*
Ընդամենը	*8647101.9*	*8390369.4*	*8833648.2*
Դոտացիա	*3267858.9*	*3747835.3*	*3866533.6*
Ընդամենը	*11914960.8*	*12138204.7*	*12700181.8*

ՀՀ կառավարության 26.02.2015թ. թիվ 171-Ն որոշմամբ մարզի սահմանամերձ թվով 2 համայնքների (Ճամբարակ և Վահան) բնակիչների բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագնի մասնակի փոխհատուցման, ինչպես նաև սահմանամերձ հողատարածքների հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարների փոխհատուցման նպատակով ս/թ սեպտեմբերի 4-ի դրությամբ հատկացվել է 779.8 մլն. դրամ՝ 3819 շահառուի *(ծրագրից օգտվել են 1482 գազի, 2337-ը հոսանքի շահառուներ, ինչպես նաև տրամադրվել է 3537 գյուղացիական տնտեսության հողի հարկ, 373 ֆիզիկական անձանց և 22 իրավաբանական անձանց անշարժ գույքի գույքահարկ)*:

Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2014թ. գլոբալ բյուջեի տարեկան ճշտված ծավալը կազմել է 2,850,1 մլն դրամ, իսկ 2015թ. կազմել է 2,830,3 մլն դրամ (99.3%-ը):

31.08.2015թ-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների փաստացի մուտքերը նախատեսված 3,622,776 հազար դրամի դիմաց կազմել են՝ 3,442,878 հազար դրամ, (կատարողականը՝ 95.0%): 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընդամենը հավաքագրված եկամուտների ցուցանիշը աճել է 7.2 %-ով կամ 230,064 հազար դրամով: ՀՀ համայնքների (ըստ մարզերի) բյուջեների եկամուտների հանրապետական ցուցանիշները ներկայացված են ***հավելված 17-ում***: ***Հավելված 18-ում*** ներկայացված են ՀՀ քաղաքային համայնքների հողի հարկի և գույքահարկի ցուցանիշները:

15.08.2015թ. դրությամբ ՀՀ համայնքների (ըստ մարզերի) կողմից կուտակած աշխատավարձի և սոց. վճարների գծով պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ***հավելված 19-ում:***

1.5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում է 126 դպրոց, այդ թվում՝ 89-ը՝ միջնակարգ, 26-ը՝ հիմնական, 2-ը՝ տարրական, 1-ը՝ հատուկ և 6 ավագ, 1 կրթահամալիր, 1 հիմնադրամ («Ծաղկունքի բաց դպրոց»): Սևան քաղաքում գործում է արհեստագործական ուսումնարան՝ 7 խմբով (114 աշակերտ):

ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2015-2016թթ. ուսումնական տարում մարզի 126 հանրակրթական դպրոցներում աշխատում է 3502 ուսուցիչ, այդ թվում 2750 կին և 752 տղամարդ: Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը 2014-2015թթ. ուսումնական տարում կազմել է 1/8.4, իսկ 2015-2016թթ. ուսումնական տարում՝ 1/8.4:

2015-2016թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական հաստատություններում սովորում է 29163 աշակերտ, որը 2014-2015թթ. ուսումնական տարվա համեմատ պակաս է 140 աշակերտով: 2015-2016թթ. ուսումնական տարում առաջին դասարան են հաճախել 2995 երեխա, իսկ 2014-2015թթ. ուսումնական տարում՝ 3015 երեխա: Դասարանների թիվը 2015-16թթ. կազմել է 1567 (նախորդ տարվա համեմատ պակասել է 17-ով): Դասարանների նվազման միտումը պայմանավորված է ավագ դպրոցների կարգավիճակի փոփոխության հետ: <u>Մարզում բոլոր երեխաները հաճախում են դպրոց:</u>

Մարզում առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագիտական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացման խնդիրները: Մարզում առկա 44 նախադպրոցական հաստատությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատ-

վությունը ներկայացված է ***հավելված 20-ում*** *(2013թ-ին ՆԴՀ թվաքանակը՝ 42, երեխաների թվաքանակը՝ 3155, իսկ 2014թ-ին՝ երեխաների թիվը՝ 3265):*

1.6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի առողջապահական համակարգում գործում են 40 բուժհաստատություններ՝ բոլորն էլ մարզպետարանի ենթակայության՝ (30-ը՝ ՊՈԱԿ-ներ, 10-ը՝ ՓԲԸ-ներ), դրանցից երկու բժշկական կենտրոն, երեք պոլիկլինիկա, երկու հիվանդանոց, մեկ ծննդատուն, մեկ առողջության կենտրոն, 12 ամբուլատորիաներ և 18 առողջության առաջնային պահպանման կենտրոններ և 1 ատամնաբուժական պոլիկլինիկա: Մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը (ներառյալ առողջության կենտրոնի մահճակալների թիվը) 355 է: «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ում իրականացվում է հեմոդիալիզ՝ 5 մահճակալով, 3 հերթափոխով:

ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում արդիականացվել են Գավառի ԲԿ-ն (100 մահճակալ) և Ճամբարակի ԱԿ-ն (30 մահճակալ): Գավառի բժշկական կենտրոնը շահագործման է հանձնվել 31.10.2011թ.-ին: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական կենտրոնի վիրաբուժական և մանկաբարձական մասնաշենքերի ամբողջական հիմնանորոգում շուրջ 4000քմ: Կենտրոնը հագեցվել է ժամանակակից հիմնական բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Ընդհանուր ներդրումները «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում կազմել են 850.2 մլն դրամ:

«Ճամբարակի առողջության կենտրոն» ՓԲԸ-ն շահագործման կհանձնվի 2015թ.-ի հոկտեմբերին: Ծրագրի շրջանակներում իրականացվել են կենտրոնի ամբողջական հիմնանորոգում (շուրջ 2200քմ): Ճամբարակի առողջության կենտրոնը հագեցվել է նաև բժշկական սարքավորումներով կահույքով և պարագաներով: Ընդամենը իրականացվել է 420 մլն դրամի ներդրում:

Արդիականացման արդյունքում բարելավվել է մարզի բնակչությանը մատուցվող ծառայությունների ֆիզիկական մատչելիությունը և որակը: Բարելավվել են նաև բժշկական կենտրոնների գործունեության ցուցանիշները: *Գավառի բժշկական կենտրոնում ստացիոնար բուժվածների թիվը 2014թ.-ին գրեթե կրկնապատկվել է 2011թ.-ի ցուցանիշների նկատմամբ: Նույն ժամանակահատվածում՝ վիրահատությունների թիվն աճել է շուրջ 30%-ով, իսկ ծննդաբերություններինը՝ շուրջ 15%-ով:*

2000-2010թթ. ընթացքում ՀԲ-ի վարկային աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում մարզում վերանորոգվել են 19 համայնքային բուժհաստատություններ (Վարդենիկի ԱԿ (2006թ.), Ձորագյուղի ԲԱ (2001թ.), Ներքին Գետաշենի ԲԱ (2002թ.), Վերին Գետաշենի ԲԱ (2001թ.), Ծովինարի ԲԱ (2001թ.), Նորատուսի ԲԱ (2001թ.),Դդմաշենի ԲԱ (2002թ), Կարմիրգյուղի ԲԱ (2000թ), Արծվանիստի ԱԱՊԿ (2004թ), Երանոսի ԲԱ (2006թ.), Լճաշենի ԱԱՊԿ (2006թ.), Գեղհովիտի ԱԱՊԿ (2007թ.), Զոլաքարի ԲԱ (2006թ.), Լուսակունքի ԱԱՊԿ (2009թ.), Ծովագյուղի ԱԱՊԿ (2006թ.), Վաղաշենի ԱԱՊԿ (2009թ.), Ծովասարի ԱԱՊԿ (2007թ.), Աստղաձորի ԱԱՊԿ (2010թ.) և Սարուխանի ԲԱ (2008թ.): Ընդհանուր առմամբ վարկային ծրագրերով մարզի ամբուլատոր պոլիկլինիկական օղակում կատարվել է շուրջ 1,1 մլրդ դրամի չափով ներդրում:

Մարզի բուժհաստատություններում աշխատող բժիշկների ընդհանուր թիվը 317, միջին բուժանձնակազմի թիվը՝ 810: 2014թ.-ի համեմատ բժիշկների ընդհանուր թիվը ավելացել է 3 մասնագետով, իսկ բուժանձնակազմի թիվը՝ 1-ով: Մարզի ամբուլատոր համակարգն ապահովված է բժշկական և բուժքույրական կադրերով: *Հիվանդանոցային ծառայությունը կարիք ունի մի շարք մասնագետների՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, վիրաբույժ, բիթ-կոկորդ-ականջաբան, հոգեբույժ, նյարդաբան, համաճարակաբան, վնասվածքաբան, ակնաբույժ-վիրահատող, էնդոկրինոլոգ, մանկավարժ-գինեկոլոգ:*

Մարզում առկա է 17 շտապ օգնության մեքենա, որից 1-ը՝ ռեանոմոբիլ 1, 4-ը՝ «Ֆորդ-տրանզիտ», 9-ը՝ «Գազել», 3-ը՝ «ՈՒԱԶ»: Բոլորն էլ բավարար ֆունկցիոնալ վիճակում են: *Մարզին անհրաժեշտ է 4 ՈՒԱԶ, 3 ռեանոմոբիլ և 3 շտապօգնության մեքենաներ:*

2014թ.-ի 1-ին կիսամյակում մարզում գրանցվել է 1265 ծնունդ, 2015թ.-ի 1-ին կիսամյակում՝ 1429 ծնունդ: 2014թ.-ի 1-ին կիսամյակում գրանցվել է մինչև 1 տարեկան երեխաների 0 մահ, իսկ

2015թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում՝ 0 մահ: 2014թ.-ի և 2015թ.-ի 1-ին կիսամյակում մայրական մահացությունը՝ 0:

Դեղորայքային ապահովվածությունը բավարար է: Ս/թ մարտ ամսից սկսած «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում կատարվել է գյուղոզայի հետազոտություն 8400 մարդ, պապ-քսուք՝ 978 մարդ, արյան գերճնշման հետազոտություն՝ 11000 մարդ: Սոց. փաթեթով նախատեսված շահառուների 65%-ը հետազոտվել է մարզի բուժհաստատություններում:

Սոցիալական ապահովություն. Մարզում բնակվում են 37.000 կենսաթոշակառուներ, 17318՝ հաշմանդամներ, 390ը՝ զոհված ազատամարտիկների և 8 անհայտ կորած անձանց ընտանիքներ, 7800-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն, բռնի տեղահանվածներ՝ 2500:

Մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սոցիալական աջակցության նպատակով նախատեսված 20.0 մլն դրամ ֆինանսական միջոցները ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումներով տրամադրվել է մարզի 92 համայնքների 264 ընտանիքների:

Մարզում խոցելի խմբերի թվաքանակի տվյալները 2014թ. և 2015թ. կտրվածքով

	Գավառ	Մարտունի	Սևան	Վարդենիս	Ճամբարակ	Ընդամենը մարզում
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը (2014թ. հուլիս)	2308	4761	1520	2207	672	11468
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը (2015թ. հուլիս)	2429	4675	1496	2450	665	11715
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը (2014թ. հուլիս)	294	327	345	415	268	1649
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը (2015թ. հուլիս)	292	324	341	418	271	1646
Գրանցված գործազուրկների թիվը (2014թ. հուլիս)	1014	1146	2029	978	229	5396
Գրանցված գործազուրկների թիվը (2015թ. հուլիս)	1632	1701	2058	1151	418	6960

1.7. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թ.-ին մարզում գործում է 69 գրադարան, որոնցից 1-ը՝ մարզային, 6-ը՝ քաղաքային, 60-ը՝ գյուղական, 2-ը՝ մանկական գրադարաններ են: Գործում է 3 թանգարան, որից 1-ը՝ բնապահպանական, իսկ 2-ը՝ երկրագիտական: 2013-2014թթ.-ներին գրադարանների ընթերցողների և թանգարաններ հաճախողների թիվը աճել է:

Մշակույթային գործունեության վերաբերյալ

	2013թ.	**2014թ.**
Գրադարան այցելուների թիվ	50500	52200

Թանգարաններ այցելուների թիվ	4530	5500

(հազար մարդ)

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում է 9 մարզադպրոց՝ Գավառում, Սևանում, Ճամբարակում, Մարտունիում Վարդենիսում և Սարուխանում: Վերջին հինգ տարիների ընթացքում մասնակի վերանորոգվել են Գավառի (փոխվել է դահլիճի տանիքը և մասնակի՝ դահլիճի հատակը – շուրջ 5 մլն. դրամ) և Սևանի (ներքին հարդարման աշխատանքներ - շուրջ 1 մլն. դրամ) մարզադպրոցները, բարերարների նվիրատվությունների հաշվին կատարվել է մարզագույքի թարմացում:

Գավառի, Գեղարքունիքի մարզային, Սևանի քաղաքային, Վարդենիսի քաղաքային և թիվ 1 մանկական, Մարտունու քաղաքային, Սևանի ջրային մարզաձևերի և «Սևան» մարզական ընկերության Մարտունու մասնաճյուղի մարզադպրոցների սաները մասնակցել են հանրապետական սպորտային մրցույթ-փառատոների, իսկ Սևանի, Մարտունու և Վարդենիսի մարզադպրոցների սաները մասնակցել են նաև Եվրոպայի և աշխարհի սպորտային մրցույթներին և ունեցել են մի շարք ձեռքբերումներ.

1. Բռնցքամարտի աշխարհի և Եվրոպայի առաջնության մասնակիցներ
2. Բազկամարտի Եվրոպայի առաջնության մասնակից
3. Համահայկական խաղերի բազկամարտի առաջնություն - I տեղ
4. Համահայկական խաղերի բազկամարտի առաջնություն - II տեղ
5. Համահայկական խաղերի բազկամարտի առաջնություն - II տեղ
6. Ջրային մարզաձևերի աշխարհի և Եվրոպայի առաջնության մասնակից

Նշված մարզադպրոցների վերանորոգման և ժամանակակից սպորտային գույքով կահավորման դեպքում կանխատեսվում է ինչպես մարզդպրոցներ հաճախողների թվի, այնպես էլ սպորտային մրցույթներին ձեռքբերումների աճ: Կարևոր է, որ մարզի մի շարք խոշոր գյուղական համայնքներում՝ Նորատուսում, Գանձակում, Վարդենիկում, Լիճքում, Լճաշենում, Վերին Գետաշենում, Գեղհովիտում բացվեն մարզադպրոցներ:

1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գեղարքունիքի մարզի բնապահպանական հիմնախնդիրներն էապես կապված են Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման ու պահպանման հարցերի հետ՝ որպես Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական կարևոր նշանակության խնդիր: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով՝

1) Սևանա լիճը Հայաստանի ջրային ռեսուրսների ամենամեծ շտեմարանն է, որն ապահովում է ինչպես կենցաղային խմելու ջրի, այնպես էլ ոռոգման կարիքների զգալի մասը.

2) Սևանա լիճը հանդիսանում է ափամերձ բնակավայրերի բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը (ձկան և խեցգետնի արդյունահանում, հանգստի գոտիների կազմակերպում, և այլն).

3) Սևանա լիճը համարվում է Հայաստանի հիմնական հանգստյան գոտիներից մեկը և մեծ նշանակություն ունի զբոսաշրջության զարգացման համար:

2014թ. ջրի տակ մնացած անտառածածկ տարածքների մաքրման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներից ներդրվել է 125.4 մլն դրամ և մաքրվել՝ 150 հա տարածք, իսկ 2015թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներից ներդրվել է 122.0 մլն դրամ և մաքրվել՝ 70 հա:

2014թ. ձկան պաշարների համալրման, արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության նպատակով ՀՀ պետական բյուջեից ներդրվել է 60.0 մլն ՀՀ դրամ: Եվ Սևանա լիճ է բաց թողնվել շուրջ 400 հազար հատ ամառային իշխան և Գեղարքունի տեսակի մանրաձուկ:

2015թ. ձկան պաշարների համալրման, արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության նպատակով ՀՀ պետական բյուջեից ներդրվել է 60.0 մլն ՀՀ դրամ: Նախատեսվում է հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Սևանա լիճ բաց թողնել շուրջ 400 հազար հատ ամառային իշխան և Գեղարքունի տեսակի մանրաձուկ:

Միաժամանակ, 2015թ. Ձկնաբուծության զարգացման և Սևանի իշխանի վերականգնման հիմնադրամի կողմից արդեն իսկ բաց է թողնվել 240 հազար հատ Սևանի իշխան, իսկ Շորժայի պիլոտային ծրագրի կողմից՝ 3000 հատ:

ՀՀ պետական բյուջեից 2014թ. 2.0 մլրդ դրամ է հատկացվել Ձկնաբուծության զարգացման և Սևանի իշխանի վերականգնման հիմնադրամին, իսկ 2015թ. 1.0 մլրդ դրամ՝ ՀՀ Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման նպատակով՝ Կարճաղբյուր համայնքում ձկնաբուծարան կառուցելու համար: Շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են:

Ճամբարակի անտառտնտեսությունում և «Սևան» ԱՊ-ի տարածքում 2014-2015թթ կատարվել են անտառվերականգնման, անտառի խնամքի, անտառային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, որի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 11.0 մլն դրամ: 2015թ. ՄԱԿ-ի կլիմային փոփոխության ծրագրի շրջանակներում տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով անտառների և արոտավայրերի կայուն կառավարում ծրագրի շրջանակներում Վարդենիսի տարածաշրջանում իրականացվում են՝

- Ծովակ համայնք՝ նոր անտառի հիմնում՝ 15 հա.
- Ծովակ-Արեգունի Սևան ԱՊ-ի տարածքում ՝ նոր անտառի հիմնում և ցանկապատում – 18.2 հա.
- Ծափաթաղ համայնք՝ կաղնուտային անտառների լրացում, խնամք - 7.0 հա.
- Ծափաթաղ համայնքի դաշտըապատյան շերտի հիմնում՝1500հատ ծառերի տնկում.
- «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում ոռոգման նպատակով իրականացվում են 2 պոմպերի տեղադրման և ոռոգման առուների կառուցման աշխատանքներ:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, մագնեզիտասիլիկատային ապարների, քրոմիտի, քաղցրահամ, թերմալ և հանքային ջրերի, բազալտի, գրանիտի, մարմարի, տուֆի, հրաբխային խարամի, պեռլիտային ավազների հանքավայրերով: 2015թ. դրությամբ մարզում առկա 26 հանքավայրերից շահագործվում են 24-ը՝ թվով 19 կազմակերպությունների կողմից:

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ավարտվել և շահագործման են հանձնվել Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանները, Սևան, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղագծերը:

Բնապահպանական առումով մարզում առաջնային խնդիր են մնում թափոնների տեղադրման, աղբահանության և աղբավայրերի չկանոնակարգված օգտագործման հարցերը: Մարզում կան պաշտոնական 5 աղբավայրեր, որոնք շահագործվում են Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքների կողմից: Կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրները բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի ռեկրեացիոն գրավչության վրա: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբահանության աշխատանքների բարելավում:

Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծը մշակվել և ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 որոշմամբ հավանության է արժանացել: Ուրվագծով նախատեսված միջոցառումների իրականացումը հնարավորություն կստեղծի լուծել լճի ավազանում աղբի հավաքման, տեսակավորման, տեղափոխման, վնասազերծման և վերամշակման խնդիրները:

Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը կենցաղային և արտադրական գործունեության հետևանքով առաջացող կեղտաջրերն են, անհրաժեշտ է նաև Սևանա լճի ջրահավաք ավազանում գտնվող մնացած համայնքներում կառուցել կոյուղագծեր և միացնել մաքրող կայաններին, անհրաժեշտ է ուսումնասիրել գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Տուրիզմի զարգացմանը զուգընթաց պետք է ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար համակարգերի կիրառումը և մարզի ու համայնքների զարգացման պլաններում այդ ենթակառուցվածքների վերականգնման համար համապատասխան միջոցներ նախատեսել:

Օժտված լինելով գեղատեսիլ բնությամբ և հարուստ պատմամշակութային ժառանգությամբ՝ մարզի զբոսաշրջությունը մնում է թույլ զարգացած, մարզի հարուստ զբոսաշրջային ռեսուրսը լիակատար կերպով չի օգտագործվում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջության

զարգացումը կարող է լինել Գեղարքունիքի մարզի տնտեսական զարգացման կարևորագույն խթանը, որը կբարձրացնի բնակչության կենսամակարդակը և հնարավորություններ կստեղծի մարզի կայուն տնտեսական աճի համար: Այս նպատակով աշխատանքներ են տարվում մարզի տարածաշրջաններում զբոսաշրջության զարգացման գործում:

1.9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Գեղարքունիքի մարզում գրանցված են ավելի քան 27 արտադրական և 477 առևտրային ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Աքվատիկ» ՍՊԸ, «Արաքս 2» ԱԿ, «Արմկոֆե» ՍՊԸ, «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ, «Սևանի հացի գործարան» ՍՊԸ:

2014թ.-ին մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է շուրջ 1823 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է մոտ 1150 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 673 մարդ:

2015թ.-ին մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում աշխատում է շուրջ 1834 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 1166 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 668 մարդ:

Փոքր և միջին բիզնեսին աջակցելու նպատակով 2014թ.-ի ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 25 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 92.0 մլն դրամ: Ֆինանսական աջակցությունը տրվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից:

2015թ. մարզկենտրոնում վերաբացվել է Սևան հանքային ջրերի գործարանը, որտեղ աշխատում են ավելի քան 50 մշտական և ժամանակավոր աշխատողներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի զբաղվածության կենտրոններում 2015թ. հուլիսի վերջի դրությամբ հաշվառված աշխատանք փնտրողները կազմում են 7.684 մարդ, որոնցից գործազուրկների թիվը կազմում է 6.960 մարդ:

Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2015թ. հուլիսի վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ (հազար մարդ)		***որոնցից՝ գործազուրկներ (հազար մարդ)***	
	Ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ	**Ընդամենը**	նրանցից՝ երիտասարդներ
Ընդամենը	**86,414**	**21,109**	**74,441**	**18,121**
ք. Երևան	17,117	2,724	15,254	2,269
Արագածոտն	4,430	1,044	3,030	772
Արարատ	6,209	1,513	5,249	1,347
Արմավիր	5,488	1,335	4,420	1,176
Գեղարքունիք	**7,684**	**1,985**	**6,960**	**1,803**
Լոռի	10,658	2,779	10,182	2,638
Կոտայք	8,581	1,962	7,266	1,742
Շիրակ	14,257	4,305	12,022	3,501
Սյունիք	4,794	1,176	4,290	1,058
Վայոց ձոր	1,755	499	1,157	332
Տավուշ	5,441	1,787	4,611	1,483

Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2015թ.

	Անվանական միջին աշխատավարձ՝ դրամ	2014թ. նույն եռամսյակի նկատմամբ, %

	I եռամսյակ	II եռամսյակ	I եռամսյակ	II եռամսյակ
Ընդամենը	175,565	180,864	111.0	110.4
ք. Երևան	188,999	195,707	109.5	110.2
Արագածոտն	123,602	125,352	111.5	111.2
Արարատ	141,028	145,072	112.6	111.5
Արմավիր	147,859	152,298	110.2	110.0
Գեղարքունիք	**140,835**	**138,691**	**114.7**	**111.7**
Լոռի	147,867	150,167	119.4	116.9
Կոտայք	154,508	159,098	112.4	107.8
Շիրակ	128,375	128,629	113.9	110.0
Սյունիք	207,630	212,936	109.2	102.1
Վայոց ձոր	141,864	142,121	120.2	115.1
Տավուշ	139,308	137,693[1]	114.2	111.8

Մանրածախ առևտրի շրջանառությունը 2014թ-ին մարզում կազմել է 21,571.3 մլն դրամ, իսկ 2013թ-ին՝ 18,248.3 մլն դրամ: 2015թ. առաջին կիսամյակում մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 10,016.2 մլն դրամ: Աճ է գրանցվել նաև մատուցված ծառայությունների ծավալում. 2014թ-ին ծավալը կազմել է 9,806.8 մլն դրամ, իսկ 2013թ-ին՝ 9,673.6 մլն դրամ (տարեցտարի աճում են մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը, ինչպես նաև նրանց զբաղվածությունը՝ մահճակալ/օրերի քանակով չափված):

[1] ԱՎԾ-ի տեղեկատվության համաձայն՝ արտադրությունը իր մեջ ներառում է 21 ճյուղերի հանրագումար, որը չի հրապարակվում: